

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2013թ. սեպտեմբերի 2-4-ը ՀՀ ԱՎԾ բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Գ. Խաչատրյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած «Բիզնես ռեգիստրները զարգացող և անցումային տնտեսությամբ երկրների համար» խորագրով նստաշրջանին և բիզնես ռեգիստրների փորձագետների խմբի հետ հանդիպմանը,
- ✓ 2013թ. սեպտեմբերի 4-6-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ԱՎԾ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Վիլնյուսում (Լիտվա) կայացած «Որակը վիճակագրությունում. վարչական տվյալներ և պաշտոնական վիճակագրություն» խորագրով բարձր մակարդակի սեմինարին,
- ✓ 2013թ. սեպտեմբերի 7-21-ը ՀՀ ՎՊԽ անդամ Լ. Պետրոսյանը մասնակցել է ք. Վիեննայում (Ավստրիա) կայացած «Մակրոտնտեսական հաշիվների վիճակագրական փոխկապակցվածությունը» խորագրով դասընթացին,
- ✓ 2013թ. սեպտեմբերի 22-26-ը ՀՀ ԱՎԾ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի առաջատար մասնագետ Ռ. Շաբոյանը և ՀՀ ԱՎԾ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Շախգելդյանը մասնակցել են ք. Քիշնևում (Մոլդովա) կայացած «Վիճակագրության տարածումը, ներառյալ PC Axis-ի օգտագործման վերաբերյալ ուսուցում» խորագրով դասընթացին,
- ✓ 2013թ. սեպտեմբերի 16--20-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը, ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսական համատարած հաշվարման վարչության պետ Վ. Գևորգյանը և մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել են ք. Օլսոյում (Նորվեգիա) կայացած «Մարդահամար 2011» ուսուցողական ծրագրին,
- ✓ 2013թ. սեպտեմբերի 23-ից հեկտեմբերի 2-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի վարչության տվյալների մշակման և դասակարգման բաժնի պետ Ա. Սարգսյանը մասնակցել է ք. Անթալիայում (Թուրքիա) կայացած «Բնակչություն և զարգացում» խորագրով դասընթացին,

- ✓ 2013թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 4-ը ՀՀ ԱՎԾ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Քեսոնում (Ֆիլիպիններ) կայացած «Վիճակագրական որակի կառավարում և պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներ» խորագրով տարածաշրջանային 6-րդ աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2013թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 4-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ.Գևորգյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած «Մարդահամար և կացարանների համատարած հաշվառում» խորագրով հանդիպմանը,
- ✓ 2013թ. հոկտեմբերի 2-4-ը ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրական բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Մինսկում (Բելառուս) կայացած «Փաստարկված երիտասարդական քաղաքականություն» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2013թ. հոկտեմբերի 2-4-ը ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Աշխատանքի վիճակագիրների 19-րդ միջազգային համաժողովին,
- ✓ 2013թ. հոկտեմբերի 8-ին ՀՀ ԱՎԾ արդյունաբերության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Հ.Հակոբյանը մասնակցել է ք. Բրյուսելում (Բելգիա) կայացած «Ինոգեյթ ծրագրի էներգետիկ վիճակագրության ցանց» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2013թ. հոկտեմբերի 9-11-ը ՀՀ ԱՎԾ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի պետ Ռ. Պետրոսյանը և միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի առաջատար մասնագետ Ռ. Շաբոյանը մասնակցել են ք. Բուդապեշտում (Հունգարիա) կայացած «Վիճակագրական մեթատվյալներ» խորագրով ներածական դասընթացին,
- ✓ 2013թ. հոկտեմբերի 15-19-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Թոխաթյանը մասնակցել է ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած Մանկական մահացության հարցերով խորհրդատվական ժողովին,

- ✓ 2013թ. հոկտեմբերի 16-18-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել են ք. Գելենջիկում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած «Մարդահամարները և միգրացիայի վիճակագրությունը ԱՊՀ երկրներում» խորագրով բարձրաստիճան համաժողովին,
- ✓ 2013թ. հոկտեմբերի 22-ին ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան մասնակցել է ք. Ռիո դե Ժանեյրոյում (Բրազիլիա) կայացած Տնային տնտեսությունների հետազոտության տվյալների հիման վրա պարենային ապահովվածության AdePT-ESM մոդուլի միջոցով պարենային ապահովվածության ցուցանիշների ստացման փորձի ներկայացմանը և քննարկմանը,
- ✓ 2013թ. հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 1-ը ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ջ. Ավոյանը մասնակցել է ք. Ալմաթայում (Ղազախստանի Հանրապետություն) կայացած «Դեպի միգրացիայի և զարգացման տվյալների կատարելագործումը Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում» խորագրով աշխատանքային հանդիպմանը: